600.0096.21.03.18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2018 թվականի №96Ա
քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի №86Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՍԱԳԱՊՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի փետրվարի 29-ի №86Ա որոշմամբ «ՍԱԳԱՊՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0332 թույլտվության գործողության ժամկետը սահմանված է մինչև 2018 թվականի մարտի 1-ը, և Ընկերությունն այն երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով,

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 827 825 (ութ հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր քսանհինգ) դրամ գումարի (հաշվարկված՝ 2010 թվականից մինչև 2013 թվականի ապրիլի 25-ը) բռնագանձման վերաբերյալ առկա է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2014 թվականի փետրվարի 12-ին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը,

դ) Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 23-ի №279Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2014 թվականի հուլիսի 23-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր

վճարների մասով հաշվարկված 335 825 (երեք հարյուր երեսունհինգ հազար ութ հարյուր քսանհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2016 թվականի օգոստոսի 25-ի №ԵԱԴԴ/0031/04/16 վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 29-ի «ՍԱԳԱՊՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №86Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում 900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2014 թվականի հուլիսի 24-ից մինչև 2018 թվականի մարտի 1-ը հաշվարկված 1 012 383 (մեկ միլիոն տասներկու հազար երեք հարյուր ութսուներեք) դրամ պարտքը, որից 733 333 (յոթ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 279 050 (երկու հարյուր յոթանասունինը հազար հիսուն) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 2-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
21 մարտի 2018թ.